ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

06.02.2015թ.
240-ի 6

ՀՀ հատուկ քննչական ծառայության
պետ պարոն Վահրամ Շահինյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Շահինյան,

Մեզ է դիմել "Քաղաքացիական հասարակության ինստիտուտ" ՀԿ-ն (ՔՀԻ) եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: 2014թ.-ի դեկտեմբերի 19 թվագրված թիվ 14-53 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ ՔՀԻ-ն դիմել է ՀՀ հատուկքննչական ծառայությանը (ՀՔԾ)՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2014 թվականին քանի՞ բողոք է ստացվել ՀՀ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից «խոշտանգում», «բռնություն» (ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական), «սպառնալիք» կիրառելու վերաբերյալ:
2. Ստացված բողոքներից քանի՞սի կապակցությամբ է քրեական գործ հարուցվել և ՀՀ քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածների հատկանիշներով: Հարուցված քրեական գործերից քանի՞սն են ուղարկվել դատարան, քանի՞սն են կարճվել, քանի՞սն են կասեցվել: Ի՞նչ հիմքերով են կասեցվել կամ կարճվել:
3. Նշված ժամանակահատվածում քանի՞ անձ է ենթարկվել քրեական պատասխանատվության վերը նշված արարքների համար:

Ի պատասխան 19.12.2014թ. թվագրված գրությամբ ՀՔԾ-ն առաջարկել է դիմել 2015թ.-ի հունվարի կեսերին, քանի որ ՀՔԾ աշխատաքներն ամփոփվելու եւ համապատասխան հաշվետվությունները կազմվելու են 2015թ.-ի հունվարին:

Համաձայն ՀՔԾ-ի պատասխան գրության՝ ՔՀԻ-ն կրկնակի անգամ վերոնշյալ տեղեկությունները խնդրել է նաեւ 2015թ.-ի հունվարի 19 թվագրված N 15-09 տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ:

Ի պատասխան 27.01.2015թ. թվագրված գրությամբ ՀՔԾ-ն հայտնել է, որ ՔՀԻ-ին հետաքրքրող տեղեկությունները կարող է ստանալ ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից եւ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ "Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ

գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը”: Սույն դրույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղեկություն տնօրինող այլ մարմնի վրա հղում անելու համար (առաջարկելու համար այլ մարմնից ստանալ տեղեկությունը) անհրաժեշտ եւ պարտադիր պայման է, որ տեղեկատվություն տնօրինողըկամ չունենա փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս լինի: ՀՔԾ-ի 27.01.2015թ. թվագրված գրությունից պարզ չէ, թե ինչ հիմքով է կատարվել հղում տեղեկություն տնօրինող այլ մարմինների վրա:

Բացի այդ, ՔՀԻ-ն, հիմնվելով ՀՔԾ-ի 19.12.2014թ. թվագրված գրության վրա, ողջամտորեն ենթադրել է, որ պահանջվող տեղեկությունն առկա է ՀՔԾ-ում, եւ որ 2015թ.-ի հունվարի կեսերին անհրաժեշտ է դիմել հենց ՀՔԾ-ին, քանի որ 19.12.2014թ. թվագրված գրությամբ ՀՔԾ-ն չի մերժել տեղեկության տրամադրումը, չի հայտնել տեղեկությունը չունենալու կամ դրա տրամադրումն իր իրավասության շրջանակից դուրս լինելու մասին, չի նշել տեղեկություն տնօրինող այլ մարմնի մասին, ում անհրաժեշտ է դիմել, թույլ է տվել ողջամտորեն ենթադրել, որ ՀՔԾ-ին է անհրաժեշտ դիմել փնտրվող տեղեկությունը ստանալու համար:

Վերոնշյալի հիման վրա գտնում ենք, որ ՀՔԾ-ի 27.01.2015թ. թվագրված գրությունը չի բխում “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի պահանջներից, հիմնված չէ տեղեկատվության ազատության սկզբունքների վրա, ուստի փնտրվող տեղեկությունն ակնկալվում է ստանալ ՀՔԾ-ից:

“Քաղաքացիական հասարակության ինստիտուտ” ՀԿ-ն իրեն անհրաժեշտ տեղեկությունը ստանալու համար ծախսում է ռեսուրսներ, այդ թվում՝ ֆինանսական, ծախսում է ժամանակ, հետեւաբար գտնում ենք, որ իրավաչափ չէ ՔՀԻ-ի փնտրած տեղեկությունը ստանալու համար տեղեկություն տնօրինող մի քանի այլ մարմիններին հողում անելը առանց “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքով սահմանված դեպքերի, քանի որ այդպիսով խոչընդոտվում է տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2014 թվականին քանի՞ բողոք է ստացվել ՀՀ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից «խոշտանգում», «բռնություն» (ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական), «սպառնալիք» կիրառելու վերաբերյալ:
2. Ստացված բողոքներից քանի՞սի կապակցությամբ է քրեական գործ հարուցվել և ՀՀ քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածների հատկանիշներով: Հարուցված քրեական գործերից քանի՞սն են ուղարկվել դատարան, քանի՞սն են կարճվել, քանի՞սն են կասեցվել: Ի՞նչ հիմքերով են կասեցվել կամ կարճվել:
3. Նշված ժամանակահատվածում քանի՞ անձ է ենթարկվել քրեական պատասխանատվության վերը նշված արարքների համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան